

ԸՍՏ ԻՐԱՎ-Ի

ԻՐԱՆԻ ԴԵՍ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԿԱՐԳ ՄԸ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ
ՋՆՋՄԱՆ ՇՈՒՐՋ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ

Լաւատեղեակ աղբիւրներ իրանեան ԻՐՆԱ լրատու գործակալութեան յայտ-նեցին, թէ Գերմանիան Բրիտանիոյ աջակցութեամբ Միացեալ Նահանգներուն առաջարկած է ժամանակաւորապէս ջնջել իրենց պատժամիջոցները, որոնց տնտեսական ազդեցութեան մեծամասնութիւնը կը կրէ իրանցի ժողովուրդը: Գերմանիոյ առաջարկը կը ներառէ Իրանի եւ Սեւտական Արաբիոյ միջեւ բանակցութիւններու ճամբան հարթել: Կը նախատեսուի, որ Ուաշինկթըն այս հարցը սերտելով իր պատասխանը տայ 10 օրէն:

ՊԵՅՐՈՒԹ ԿԸ ՍԳԱՅ ԻՐ ԶՈՀԵՐԸ

ՆԱԽՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

Պէյրութի նաւահանգիստի պայ-թումէն շաբաթ մը ետք երկրին մէջ կը տիրէ անմխիթար իրավիճակ: Պայթումիւն պատճառով տակա-ւին մեծ թիւով անյայտ կորսուածներ կան, իսկ ծանրօրէն վիրաւորուած պարագաներէն ամենօրեայ դրու-թեամբ զոհեր կ'արձանագրուին: Առողջապահութեան նախարա-րութեան համաձայն, պայթումիւն պատճառած զոհերուն թիւը հասած է 171-ի, իսկ անյայտ կորսուածնե-րուն թիւը կը տարուբերի 30-40-ի միջեւ: Նախարարութեան համաձայն, 6000 վիրաւորներէն 1500-ը բժա-խնոյի բժշկական խնամքի կը կա-րօտին, իսկ 120-ը կը գտնուին վերա-կենդանացման բաժանմունքին մէջ:

Պէյրութի հսկայական պայթու-մին իբրեւ հետեանք, լիբանանա-հայութիւնը եւս ունեցաւ իր մարդ-կային կորուստները, որոնք են 13 զոհեր եւ 250 վիրաւորներ: Լիբանանահայ նահատակներն են. Տէյիա Կետիկեան-Յակոբեան, Ճեսիքա Պեզճեան, Շանթ Յակոբ-եան, Նազար Նաճարեան, Անահիտ Պերպերեան, Ժաք Պարամաք-եան, Ալիս Պալեան-Տէկիրմենճեան, Լիզա Գաւուքճեան-Կեօզիպե-յիլճեան, Կայա Ֆուտուլեան, Վարուժ Թոսունեան, Սարգիս Թէքիլեան, ընդ Սոֆի Խոսրովեան եւ Արամ Սարգիսեան:

Պայթումին ուղղակի հետեւանքներուն ենթարկուած քաղաքացի-ներ մնացած են անօթեան, իսկ պայթումին ցնցումը տակաւին կը հա-լածէ քաղաքացիները, որոնք երէկ երեկոյեան ժամը 5:00-էն սկսեալ համախմբուեցան պայթած նաւահանգիստին դիմաց գտնուող Ար-տերկրի լիբանանցիի յուշարձանին շուրջ, եւ ժամը 6:06-ին, այսինքն՝ այն ժամուն, երբ նաւահանգիստի հսկայական պայթումը պատահած էր, մէկ վայրկեան յոտնկայս լուրջեամբ, աղօթքով, եկեղեցոյ զանգե-րուն ղողանջով եւ նամագով յարգեցին պայթումին պատճառած նա-հատակներուն յիշատակը: Ապա կարդացուեցան պայթումին պատճառած բոլոր զոհերուն անունները:



Նշենք, որ տեղի ունեցաւ նաեւ մոմավառութեան արշաւ մը՝ Ժմմ-մէյզիէն Մար Միսայել: Ցորենի շտեմարանին կիսականգուն պատերուն եւ պայթումին գործուած աւերակներուն կից իրենց եղբայրներուն եւ քոյրերուն յիշա-տակը յարգած քաղաքացիները երգեցին Լիբանանի քայլերգը, ապա ուղղուեցան Կեդրոնական Պէյրութ, ուր անոնք պահանջեցին խորհրդ-դարանական կանխահաւ ընտրութիւններ: Կարգ մը ցուցարար երիտասարդներ ամենօրեայ իրենց «կռիւր» մղեցին ապահովութեան ուժերուն դէմ՝ փորձելով քանդել դէպի խորհրդարան տանող մուտքերուն երկաթեայ պատնէշները: Ցուցարարները քարկոծեցին ապահովութեան ուժերը, ինչպէս նա-եւ պայթուցիկներ տեղացուցին անոնց վրայ: Ապահովութեան ուժերը իրենց կարգին ցուցարարները փորձեցին ցրուել՝ անոնց վրայ ար-ցունքաբեր կազ նետելով:

Շար.ը՝ էջ 2

ԵՐԵՄՓՈՒՆԸ ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ԱՅՑԵԼԵՑ ՄԱՐ ՄԵԱՅԷԼԻ ՄԷՁ
ԲՆԱԿՈՎ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ
ՎՆԱՍՈՒԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայա-ցուցիչ, Երեսփոխան Յակոբ Բագրատունի երէկ՝ Երեքշաբթի, 11 օգոստոսին այցելեց Պէյրութի նաւա-հանգիստի պայթումէն ամենէն շատ վնասուած

Շար.ը՝ էջ 4

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ
ԿԻՊՐԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայա-ցուցիչ, Երեսփոխան Յակոբ Բագրատունի, «Շաղ-գոյեան» կեդրոնի իր գրասենեակին մէջ ընդունեց Կիպրոսէն հասած բժշկական-մարդասիրական պատուիրակութիւն մը՝ գլխաւորութեամբ Երեսփո-խան տոքթ. Էլէնի Թեոխարուսի:

Շար.ը՝ էջ 4

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԷՆ ԵՏՔ
ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԵՆՔ ՄՈՒԹ՝
ՓԱՊՈՒՂԻԻ ՄԸ ՄԷՁ »

ՇԵՇՏԵՑ Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կո-միտէի ներկայա-ցուցիչ, Երեսփո-խան Յակոբ Բագ-րատունի երէկ «Սաուր քըլ Լըպ-նան» ռատիոկա-յանին հետ հար-ցազրոյցի մը ըն-թացքին յայտնեց, որ կառավարու-թեան հրաժարա-կանէն ետք մուտք գործած ենք մուրֆապուղիի մը մէջ: «Նկատի ունե-

նայով կառավարութիւններ կազմելու նախկին փորձառութիւնները, կը նա-խատեսենք, որ կառավարութեան կազմութիւնը այդքան ալ արագ կա-րելի չլլայ կատարել», ըսաւ ան:

Երեսփոխան Բագրատունի յայտ-նեց, որ կառավարութեան հրաժարա-կանը նոր փուլի շրջագիծին մէջ պէտք է դիտել՝ նկատի ունենալով, որ անի-կա պատահեցաւ Պէյրութի նաւահա-նգիստի պայթումին պատճառած աղէ-տէն ետք, յատկապէս ի մտի ունենա-լով, որ հրաժարեալ վարչապետ Հաս-սան Տիապի կառավարութիւնը իր կազմութեան օրէն սկսեալ քաղաքա-կան ամբողջական զօրակցութեան չէ արժանացած:

Կառավարութեան կազմութեան առումով, Յ. Բագրատունի յայտնեց, որ ինք արտաքին նախաձեռնութիւն-ներուն չի վստահիր, որովհետեւ անոնք նկատի չեն ունենար լիբանա-եան ներքին բարդութիւնները: Վարչապետի հաւանական թեկ-

նածուի մասին հարցումի մը պա-տասխանելով՝ Յ. Բ ա գ ր ա տ ու ն ի յայտնեց, որ քաղա-քական ուժերուն մօտ տակաւին յստակ անուն մը չկայ՝ անելցնելով, որ ՀՀ Դաշնակցու-թիւնը իր կարգին տակաւին յստակ պատկերացում չու-նի, թէ ո՛վ է այն սիւննի անձնաւո-րութիւնը, որ պատ-րաստ է կազմելու երկրին նոր կառավարութիւնը:

Յ. Բագրատունի անհաւանական նկատեց Սաատ Հարիրիի կողմէ դարձեալ վարչապետի պաշտօնի ստանձնումը: «Պէյրութի նաւահա-նգիստի պայթումին ընթացքին մենք Հարիրիի մօտ կը գտնուէինք եւ ան յայտնեց, որ վարչապետի պաշտօնը ստանձնելու նպատակ չունի, որովհե-տեւ Լիբանանին ներկայացնելիք նո-րութիւն մը չունի», հաստատեց ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ նաւահանգիստի պայթումը ի՞նչ վնասներ պատճառած է Պուրճ Համու-տի եւ Մտաուարի շրջաններուն, Յ. Բագրատունի յայտնեց, որ անպաշ-տօն կերպով վնասներու գնահատում կատարուած է՝ շրջանի հեղինակու-թիւններէն: «Պարզուած է, որ քանդու-մը հսկայական է, ինչպէս նաեւ կան շէնքեր, որոնք բնակիչներուն կեան-քին վտանգ կը սպառնան, որովհետեւ փուլ գալու ենթակայ են», եզրափա-կեց ան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԼՈՅ ԲԱՆԲԵՐԸ
ԱՆԴՐԱՎԱՐՁԱԾ Է ԹՈՒՐԲՈՅ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ



Հայաստանի Հանրապետութեան արտաքին գոր-ծոց նախարարութեան մամլոյ բանքեր Աննա Նադ-դալեան անդրադարձած է Հայաստանի մէջ Սեւրի հաշտութեան պայմանագիրի 100-ամեակի յիշա-տակման առնչութեամբ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան: Շար.ը՝ էջ 3

ԱՐՅԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ՍԵՒՐԻ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԵՆՉԵՒ ԱՅՍՕՐ
ԿԸ ՄՆԱՅ ԱՐԴԻԱԿԱՆ»



Սեւրի պայմանագիրի 100-ամեակին առիթով Ար-ցախի արտաքին գործոց նախարարութիւնը տարա-ծած է յայտարարութիւն մը, որուն մէջ կը կշռուի. «100 տարի առաջ՝ 10 օգոստոս 1920-ին, Փարիզի Սեւր արուարձանին մէջ ստորագրուեցաւ խաղաղու-թեան պայմանագիրը՝ մէկ կողմէ, իբրեւ գլխաւոր դաշնակից պետութիւններ, Բրիտանական կայսրու-թեան, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Ճափոնի, ինչպէս Շար.ը՝ էջ 4

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՑԵԼԵՑ
ՊԵՅՐՈՒԹԻ ՊԱՅԹՈՒՄԵՆ ՎՆԱՍՈՒԱԾ
ՀԱՅՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ



Երեքշաբթի, 11 օգոստոս 2020-ի առաւօտուն, Արամ Ա. վեհափառ հայրապետը, ընկերակցու-թեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի, Ազգային վարչութեան անդամնե-րուն եւ միաբան հայրերուն, յաջորդաբար այցելեց Պէյրութի եւ շրջակայից եկեղեցիները՝ Ս. Նշան, Ս. Յակոբ, Ս. Գեորգ, Ռըմէլի Ս. Յարութիւն, Ս. Յով-հաննու Կարապետ, Սրբոց Զառանկից Մանկանց, Ս. Շար.ը՝ էջ 3

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐՐՈՐԴ ԹՈՒԺՔՈՎ
ՊԵՅՐՈՒԹ ՈՒՂԱՐԿԱԾ Է ԱՒԵԼԻ
ՔԱՆ 12 ԹՈՒ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ

Հայաստանի Հանրապետութեան կառավարու-թիւնը երէկ՝ 11 օգոստոսին մարդասիրական աջակ-ցութեան պարագաներով լցնուն երրորդ օդանաւը ուղարկած է Լիբանանի Հանրապետութեան կառա-վարութեան: «Արմէնփրես» կը տեղեկացնէ, որ այս անգամ ուղարկուող մարդասիրական օգնութիւնը անելի քան 12 թոն է: Նշենք, որ Հայաստանէն առաջին թռիչքը եղած է 8 Շար.ը՝ էջ 4

ՊԵՅՐՈՒԹ ԿԸ ՍԳԱՅ ԻՐ ԶՈՀԵՐԸ...

Շարունակում Ա. Էջեն

Լիբանանեան Կարմիր խաչը յայտնեց, որ բախումներուն իբրեւ հետեւանք հիւանդանոց փոխադրուած են 10 վիրաւորներ, իսկ 32 ուրիշներ տեղւոյն վրայ բուժուած են:

Նաւահանգիստի պայթումին հետաքննութիւնը դատական իշխանութիւններուն կողմէ կը շարունակուի:

Դատական իշխանութիւնները հաստատեցին, որ Մաքսատան ընդհանուր տնօրէն Պատրի Տահեր ընդհանուր դատախազութեան մօտ ձերբակալուած պիտի մնայ, Նոյնիսկ եթէ անոր հարցաքննութենէն 48 ժամեր անցած են, որովհետեւ այդ պայթումին թղթածրարը փոխանցուած է Արդարութեան գերագոյն խորհուրդին:

Հանրապետութեան նախագահ գոր. Միշել Աուն երէկ ստորագրեց Պէյրութի նաւահանգիստի պայթումին թղթածրարը Արդարութեան գերագոյն խորհուրդին փոխանցելու հրամանագիրը:

Նախագահ Աուն ընկերային ցանցերուն վրայ տեղադրեց գրառում մը, որուն ընդմէջէն հաստատեց, որ նաւահանգիստի պայթումէն շաբաթ մը ետք ինք կը վերահաստատէ լիբանանցիներուն կատարած իր խոստումը, թէ պիտի չհանգստանայ, մինչեւ որ այդ աղետին բոլոր ծալքերը բացայայտուին, «իսկ պայթումի թղթածրարին Արդարութեան գերագոյն խորհուրդ փոխանցումը այդ խոստումը գործադրելու ուղղութեամբ առաջին քայլն է», հաստատեց նախագահ Աուն:

Լիբանանեան բանակի հրամանատար գոր. Ժոզեֆ Աուն երէկ այցելեց նաւահանգիստ, ուր հանդիպում մը ունեցաւ Պէյրութի նաւահանգիստի տնօրինման եւ յանձնաձումի վարչութեան ընդհանուր տնօրէն Պատեմ Զայսիի հետ:



Հանդիպումին ընթացքին գոր. Աուն իր խօսքը սկսաւ ցաւակցութիւն յայտնելով զոհերուն ընտանիքներուն, ինչպէս նաեւ ապաքինում մարդելով վիրաւորներուն:

«Մենք պէտք է յառաջ ընթանանք եւ փինիկի նման յառնինք: Նաւահանգիստը Լիբանանի կենսական թոցն է, եւ պէտք է բազմապատկել ջանքերը, որպէսզի աշխատանքը Նոյն թափով ընթանայ, գէթ նաւահանգիստի այս բաժինին մէջ, որ համեմատաբար աւելի քիչ վնասուած է», ըսաւ ան:

Զօր. Աուն գգուշացուց նաւահանգիստին մէջ գոյութիւն ունեցող վտանգաւոր այլ նիւթերէ՝ պահանջելով խուզարկել բոլոր բեռնարկղերը:

«Լիբանանեան բանակը իր բոլոր կարողութիւնները կը գետնէ՝ Լիբնութի նաւահանգիստին տրամադրութեան տակ, որպէսզի առաւելագոյն ձեւով օժանդակէ անոր: Պէտք է նաւահանգիստը իր դիրքը վերականգնէ, որպէսզի հայրենիքին նկատմամբ լիբանանցիին վստահութիւնը վերականգնուի: Մենք միշտ կը զօրակցինք լիբանանցիներուն եւ նաւահանգիստէն ամբողջ աշխարհին պիտի արտածենք մեր հայրենիքին նկատմամբ մեր վստահութիւնը», շեշտեց գոր. Աուն:

Իր կարգին, Զայսի շեշտեց, որ Պէյրութի նաւահանգիստը իր կամքն ու ուժերը կը հաւաքէ՝ վերկսելու համար աշխատանքի:

Զայսի ընդգծեց, որ ամէն ջանք ի գործ կը դրուի, որ նաւահանգիստի բոլոր վարչութիւնները գործեն, եւ հասնող նաւերուն եւ անոնց բեռներուն ստանձնումի աշխատանքը հեզգասահութեամբ ընթանայ:

«Նաւահանգիստին վիճակը աստիճանաբար կը բարելաւուի եւ ճիգ պիտի չխնայուի, որ ան վերադառնայ իր նախկին աշխուժութեան եւ Միջին Արեւելքի մէջ իր առանցքային դերակատարութեան», ըսաւ Զայսի:

Ան հաստատեց, որ նաւահանգիստին անձնակազմը կազմ ու պատրաստ կ'աշխատէ եւ ապահովական կառոյցներուն հետ կը գործակցի», ըսաւ ան:

Պետական անվտանգութեան ընդհանուր տնօրէնութեան տեղեկատուական գրասենեակը երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ Պետական անվտանգութեան ընդհանուր տնօրէնութիւնը նաւահանգիստին մէջ իր գրասենեակը ունեցաւ 2019-ի ապրիլին:

Հաղորդագրութեան մէջ շեշտուեցաւ, որ այդ գրասենեակին պարտականութիւնն էր փտածութեան դէմ պայքարի: «Այս շրջագիծին մէջ, Պետական անվտանգութեան գրասենեակը որոշ բացթողումներ նշմարեց, յատկապէս՝ թիւ 12 պահեստանոցին մէջ եւ իր հետախուզութիւնները կատարեց ու այդ մասին իր հրամանատարութիւնը տեղեակ պահեց: Օրէնքը արդարութիւն պիտի պարտադրէ անոր, որ լուռ կ'աշխատի եւ պիտի պատժէ անոր, որ հետաքննութեան ուղին փորձած է շեղել, ինչպէս նաեւ իր պարտականութիւններուն մէջ թերացած է», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

«Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը երէկ հաղորդեց, որ նախագահ Աուն եւ նախկին վարչապետ Հասսան Տիպպի անցեալ ամսուան ընթացքին լիբանանեան ապահովական պատասխաստուներու կողմէ գգուշացումներ ստացած են, թէ Պէյրութի նաւահանգիստին մէջ 2750 թոն ամոնիում նայթթեթ գոյութիւն ունի եւ անկէկա ապահովական վտանգ է, որովհետեւ պայթելու պարագային կրնայ քանդել մայրաքաղաքը:

Շուապ օգնութեան գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար հազարապետ-գորավար Սոհրաբ Խէյր յայտնեց, որ Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով 70 հազար բնակարան քանդուած է:

Պէյրութի ճարտարապետներու սենտիքայի նախագահ Ժաւթ Թապթթի իր կարգին յայտնեց, որ Պէյրութի մէջ կան 40 շէնքեր, որոնք փրկ գալու ենթակայ են՝ աւելցնելով, որ իրենք կազմած են 650 ճարտարապետներու խումբ մը եւ աշխատանքի լծուելու առումով կանաչ լոյսի կը սպասեն:

Նշենք, որ Պէյրութի նահանգապետ Մարուան Ապպուտ շեշտեց, որ Պէյրութի քաղաքապետարանի ճարտարապետական բաժանմունքը շրջանի շէնքերուն եւ կառոյցներուն վնասներու գնահատում պիտի կատարէ:

«Հնութիւն նկատուող շէնքերու սեփականատերերուն արտօնագիր պիտի չյանձնենք, որպէսզի անոնց փոխարէն արդիական եւ նորոգւող շէնքեր չկառուցուին», հաստատեց ան:

Երեկոյեան Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու յայտնեց, որ ինք հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցած է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ եւ շեշտած Լիբանանին օժանդակելու Իսրայէլի պատրաստակամութիւնը:

Նեթանիահու յայտնեց, որ ինք Մաքրոնին ըսած է, թէ Պէյրութի նաւահանգիստի պայթումին նման այլ աղետներ կանխարգիլելու համար Հրգպալլա իր մթերած հրթիռներն ու պայթուցիկ նիւթերը պէտք է հեռացնէ Լիբանանի բնակելի շրջաններէն:

ՇՈՒՐԻ ԻՒ ՍԱՖԱՏԻ ԱՅՅԵՆԵՏԻՆ ԼԻՔԱՆԱ



Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառած աղետին առումով Լիբանան այցելեցին Եգիպտոսի եւ Յորդանանի արտաքին գործոց նախարարներ Սամեհ Շուքրին եւ Այման Սաֆատին:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Սամեհ Շուքրի երէկ առաւօտեան այցելեց Պաապտա, ուր հանդիպում մը ունեցաւ հանրապետութեան նախագահին հետ:

Հանդիպումէն ետք Շուքրի յայտնեց, որ իրենք պատրաստ են լիբանանցիներուն զօրակցելու՝ հաստատելով, որ իրենք համոզւած են, թէ Լիբանան կարողութիւն ունի այս աղետը շրջանցելու եւ նաւահանգիստի պայթումին իբրեւ հետեւանք երկրին դէմ ծառացած տագնապները յաղթահարելու:

«Կան կուտակումներ, որոնք տառապանք եւ մարտահրաւեր պատճառած են, եւ անհրաժեշտ է աշխատիլ լիբանանցիներուն առաջնահերթութիւնները ապահովելու», ըսաւ ան:

Շուքրի ընդգծեց, որ Եգիպտոս օդային կամուրջ պիտի հաստատէ Լիբանանի հետ՝ մարդասիրական օժանդակութիւններ տրամադրելու: «Մենք պատրաստ ենք միշտ լիբանանցի ժողովուրդին զօրակցելու», ըսաւ ան:

Շուքրի այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի, որուն հետ հանդիպումին ընթացքին շեշտեց, որ Լիբանանին պիտի ներկայացնեն ամէն տեսակի օժանդակութիւն, յատկապէս Պէյրութի վերակառուցման մէջ Գահիրէի ստանձնելիք բաժինին առումով:

Շուքրի մաղթեց, որ Լիբանան կարենայ շրջանցել իր դիմագրաւած մարտահրաւերները:

Ան այցելեց Քլեմանսօ, ուր հանդիպում մը ունեցաւ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ ժոմպաթի հետ:

Ժոմպաթի բարձր գնահատեց Եգիպտոսի օժանդակութիւնը, յատկապէս դաշտային հիւանդանոցներ տրամադրելու գործնական քայլը:

Շուքրի այցելեց նաեւ նախկին վարչապետ Սաադ Հարիրիի Կեդրոնական Պէյրութի բնակարանը, ուր հանդիպում մը ունեցաւ Հարիրիի եւ նախկին վարչապետներ Ֆուատ Սիւնիորայի եւ Թամմալ Սալամի հետ:

Եգիպտոսի դիւանագիտութեան պետը իր կեցութեան վայրին մէջ ընդունեց Մարատա հոսանքի ղեկավար Սէլման Ֆրեմփիէն, որ հանդիպումէն ետք մեկնեցաւ առանց մեկնաբանութիւն կատարելու:

Շուքրի այցելեցին նաեւ Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, հրաժարեալ երեսփոխան Սամի Ժեմայէլ եւ Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Ժահիճիի ներկայացուցիչ Մըլիհեմ Ռիաշին:

Ժեմայէլ շնորհակալութիւն յայտնեց Գահիրէի՝ անոր ի գործ դրած ջանքերուն համար:

Միւս կողմէ, Ռիաշի յայտնեց, թէ Շուքրիի հետ հանդիպումը եղած է դրական:

Շուքրի հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ մարուսի համայնքի Պշարա Ռայի պատրիարքին հետ: Ան զօրակցութիւն յայտնեց Ռայի պատրիարքին եւ անոր հետ քննարկեց Լիբանանը յուզող հարցերն ու տագնապները:

Նշենք, որ Շուքրի ստուգեց նաեւ դաշտային հիւանդանոցը, որ տրամադրուած էր Լիբանանին:

Յորդանանի արտաքին գործոց նախարար Այման Սաֆատի այցելեց նախագահ Աունի, որուն յայտնեց, թէ Լիբանանը հարածած աղետը Նոյնքան ծանր է Յորդանանի համար՝ աւելցնելով, որ Յորդանանի տրամադրած դաշտային հիւանդանոցը պիտի մնայ այնքան ատեն, որ Լիբանան անոր կարիքը ունի:

Ան հաստատեց, որ Յորդանանէն Լիբանան պիտի հասնին օդանաւեր, որոնք պիտի փոխարեն մարդասիրական օժանդակութիւն: «Լիբանան պայթումին հետեւանքները առանձին պիտի չկրէ», ըսաւ Սաֆատի:

Ան հանդիպում մը ունեցաւ արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Շարպէլ Ուեպպի հետ:

Հանդիպումին ընթացքին Սաֆատի ընդգծեց, որ Յորդանան միշտ նեցուկ կը կանգնի Լիբանանին:

Նշենք, որ Սաֆատի այցելեց Յորդանանի տրամադրած դաշտային հիւանդանոցը, որ գետնուղեցաւ Տըքուսէի մէջ:

Մինչ օտար պաշտօնատարներու այցելութիւնները կը շարունակուին, այլ պետութիւններ կը շարունակեն իրենց օժանդակութիւնները կատարել Լիբանանին եւ լիբանանցի ժողովուրդին:

Օժանդակութիւններու առումով չեփական դեպակաստունը յայտարարեց, որ բժշկական պիտոյք փոխադրող երկու օդանաւեր հասած են Լիբանան՝ աւելցնելով, որ այդ օժանդակութիւնները պիտի տրամադրուին Պէյրութի հիւանդանոցներուն:

Միւս կողմէ, սպանական օդանաւ մը վեց թոն ալիւր փոխադրեց Լիբանան եւ այդ օժանդակութիւնը յանձնեց լիբանանեան բանակին:

Հարաւային Զորեան որոշեց 4 միլիոն տոլարի օժանդակութիւն տրամադրել Լիբանանին, իսկ Զանատայի վարչապետ Ճապթին Թրուսօ հաստատեց, որ Լիբանանին տրամադրուած քանատական օժանդակութիւնը 30 միլիոն տոլարի պիտի բարձրացնէ:

ՊԵՐԻՆ ՆԱԽԱԳԱՅԵՏ ԱԶՏԱՏԱԳՐՈՒ ԵՒ ԲԱՐԳԱՄԱՃՈՒՄ ՊԼՈՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԻՆ ԵՒ ԸՆԴՈՒՆԵՑ ԺՈՒՊԼԱՐԸ



Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ նախագահեց Ազատագրում եւ բարգաւաճում պլոքի արտակարգ նիստին, որուն ընթացքին քննարկուեցան Պէյրութի նաւահանգիստի պայթումին հետեւանքները:

Ազատագրում եւ բարգաւաճում պլոքը կոչ ուղղեց արագ կերպով կազմելու նոր կառավարութիւնը, վաւերացնելու ընտրական նոր օրէնք մը, ինչպէս նաեւ ստեղծելու լիբանանեան ծերակոյտը:

Երեկոյեան Պըրրի Այն Թինէի մէջ ընդունեց Ուալիտ ժոմպաթը, որուն հետ քննարկեց երկիրը յուզող իրադարձութիւնները:

Հանդիպումէն ետք ժոմպաթ յայտնեց, որ Լիբանանի համար կառավարութիւն մը ունենալը անհրաժեշտութիւն է՝ հաստատելով, որ կառավարութեան անուանումը ոչ մէկ տարբերութիւն կ'ընէ, ինչպէս նաեւ աւելցուց, որ ինք ոչ մէկ նախապայման ունի նոր կազմուելիք կառավարութեան մաս կազմելու առումով:

«Պայման է սակայն, որ այդ կառավարութեան առաջնահերթութիւնը ըլլայ տնտեսական կացութիւնը բարելաւել, Պէյրութը վերակառուցել եւ բարեկարգումներ կատարել», ըսաւ ան:

Ժոմպաթ յայտնեց, որ ինք վարչապետի յստակ թեկնածու չուի՝ աւելցնելով, որ կառավարութեան կազմութեան իմաստով պիտի համագործակցի Պըրրիի հետ:

Ժոմպաթ ընդգծեց, որ «Զորունա»-ի համաճարակը արագ թափով կը տարածուի՝ ընդգծելով արտակարգ դրութիւն յայտարարելու կարելոյթիւնը:

Յայտնեց, որ Պըրրի խորհրդարանը հրաւիրած է նիստի մը, որ պիտի գումարուի վաղը՝ հինգշաբթի, 13 օգոստոսին, ԵՈՒՆԵՍԸՕ-ի պալատին մէջ:

Նիստին ընթացքին պիտի քննարկուի Պէյրութի մէջ յայտարարուած արտակարգ իրավիճակը:

ՀԶՐ ԼԻՔԱՆԱ ՀԱՍԱՆՄԵՐՈՒՄ ԴՐՈՒՄՏԵՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՕԴԱՆԴԱԿՈՒԵԱՆ ՓԱՐԷԻԶԻ ԽՈՐՀՐԱՄԺՈՂՈՎԸ

Հօր Լիբանան համախմբումը երէկ գումարեց նիստ մը՝ նախագահութեամբ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպարան Պասիլի:

Նիստէն հրապարակուած հաղորդագրութիւնը կը նշէ, որ համախմբումը պահանջեց քրեական խիստ եւ թափանցիկ հետաքննութիւն կատարել Պէյրութի նաւահանգիստին մէջ՝ իմաստալու համար պայթումին ծալքերը, եւ ճշդելու համար պատասխանատուութիւնները:

Համախմբումը ընդգծեց, որ պետութիւնը պատասխանատու է քանդուած թաղամասերն ու բնակարանները վերակառուցելու: Համախմբումը դրուատեց Լիբանանի օժանդակութեան Փառիզի խորհրդաժողովը, ինչպէս նաեւ ընդգծեց, որ ամէն ջանք ի գործ պիտի դնէ դիւրացնելու համար նոր կառավարութեան կազմութիւնը:

Կառավարութեան կազմութեան առումով, կարգ մը աղբիւրներ յայտնեցին, թէ Պասիլ նախանցեալ երեկոյեան հանդիպում մը ունեցած է Պըրրիի հետ՝ ներկայութեամբ նախկին նախարար Ալի Հասսան Խալիլի եւ Հրգպալլայի ընդհանուր քարտուղարի քաղաքական հարցերու օգնական Հիւսէյն Խալիլ հետ:

Հանդիպումին ընթացքին քննարկուած են յառաջիկայ փուլը դիմագրաւելու պատկերացումները: Պէտք է աւելցնել նաեւ, որ Պասիլ ընկերային ցանցերուն ընդմէջէն կատարած էր գրառում մը, որուն մէջ հաստատած էր, որ պէտք է կազմել արդիւնաբեր եւ աշխուժ կառավարութիւն մը՝ ընդգծելով, որ իրենք պիտի գործակցին եւ պիտի դիւրացնեն նոր կառավարութեան կազմութիւնը:

Նշենք, որ հրաժարեալ վարչապետ Հասսան Տիպպի երէկ հրապարակեց շրջաբերական մը, որուն մէջ հաստատեց, որ կառավարութիւնը պիտի գործէ երկրին սահմանադրութեան թիւ 64-րդ յօդուածին համաձայն, այսինքն՝ պիտի գործէ իբրեւ ընթացիկ գործերու կառավարութիւն:

Միւս կողմէ, Հօր հանրապետութեան երեսփոխանական պլոքը այսօր կեսօրէն առաջ ժամը 11:00-ին, Մեհրապի մէջ պիտի գումարէ արտակարգ նիստ մը՝ նախագահութեամբ Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Ժահիճիի:

ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՎՐՈՎ

ՎԱՐԱԿՈՒՄԾՆԵՐՈՒՆ ԹԻԷԸ ՀԱՄԱՐ

7121-Ի, ՄԱՀՈՒՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝

87-Ի, ԻՍԿ ԱՊԱՔԻՆԱԾՆԵՐՈՒՆԸ՝ 2377-Ի

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երէկ Լիբանանի մէջ «Զորունա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 7121-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 309 նոր վարակուածներ:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Զորունա» ժահրով վարակուած 87 պարագաներ մահացած են, իսկ 2377 ուրիշներ՝ ապաքինուած:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՒՆԴԻՆ

• **«Փէյփալ»-ի ծրագիրին միջոցով՝**

Արա Օշական (Միացեալ Նահանգներ) 150\$

Ա. ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊԷՅՐՈՒԹԻ ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏԻ ԱՂԷՏԵՆ ԵՏՔ ՀԱՅԱՀԱՌԾ ԸՐՁԱՆՆԵՐՈՒ ՊԱՐՁԱԾ ՊԱՏԿԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ



4 օգոստոսի Պեյրուֆի նաւահանգիստի աղէտին հետեւանքով, մայրաքաղաք Պեյրուֆի Մար Միայել շրջանին մէջ արձանագրուած է հայ գոհերու մեծագոյն թիւը: Այս թաղամասին մէջ է, որ նաեւ հայ բնակչութեան բնակարանները գրեթէ փլատակ վիճակի մէջ են: Այս բնակարանները կը գտնուին հիմնովին նորոգութեան անհրաժեշտութեան դիմաց: Էշրեֆիէ եւ հալիլ Պետեի շրջաններուն մէջ հիմնականին մէջ քանդուած են բնակարաններու պատուհաններն ու դռները, ինչպէս նաեւ ելեկտրական իրեր եւ մաս մըն ալ տնային կահոյք: Արեւմտեան Պեյրուֆի եւ Յատասի մէջ համեմատաբար բնակարաններու վնասները աւելի նուազ են: ՀՀԴ «Քրիստափոր» կոմիտէին հաստատումով, նշուած շրջանին մէջ շուրջ 600 հայ ընտանիքներու բնակարանները ստացած են վնասներ:

Աղէտէն անմիջապէս ետք արդէն շրջանի երիտասարդութիւնը լծուած է փրկարար աշխատանքի: Յա-



ջորդող օրերուն մաքրութեան եւ քանդումներու պատճառով ստեղծուած աւերի վերացումը կը կատարուի ՀՄԸՄ Պեյրուֆի, ինչպէս նաեւ կարգ մը պարագայներու Անթիլիասի եւ Ժոնէտի մասնաճիւղերուն օժանդակութեամբ: ԼԵՄ-ի եւ ՁՈՄ-ի անդամները նոյնպէս աշխատանքի լծուած են այս շրջանին մէջ: Մաքրութեան առաջին փուլը աւարտած ըլլալով՝ այժմ կը կատարուի պատուհաններու եւ դռներու առժամեայ դասաւորում: Անտուն մնացած ընտանիքները ժամանակաւոր կերպով փոխադրուած են պանդոկ, իսկ մեծ թիւով ընտանիքներ ապաստանած են այլ շրջաններու մէջ գտնուող իրենց հարազատներուն տունները: Սննդամթերքի ապահովումը ամբողջական է՝ օտար կազմակերպութիւններու եւ կոմիտէի համատեղ ջանքերով: Կը տրամադրուին նախաճաշ, ճաշ եւ ընթրիք, ինչպէս նաեւ տուփերով սննդամթերք: Երիտասարդական ծառայողական խումբեր, իրենց կազմակերպած նուիրահաւաքի եւ օժանդակութեան աշխատանքները կը համադրեն կոմիտէին հետ, որպէսզի կարելի ըլլայ բոլոր ընտանիքներուն անմիջական կարիքներուն հասնիլ: Կոմիտէն ԼՕԽ-ի հետ գործակցաբար հոգեբաններու ճամբով նաեւ կը փորձէ աղէտի սարսափէն հոգեպէս տուժած հայորդիներուն բժշկական խնամք ապահովել: Բազմաթիւ ընտանիքներու արտասահման բնակող հարազատներ արդէն իսկ չեն գլանար իրենց օգնութեան ձեռքը երկարելու: Կոմիտէն նիւթական հատուցում կը տրամադրէ նաեւ կարիքաւոր ընտանիք-



ներուն, որպէսզի կարենան այս փուլին սնունդէն անկախ, իրենց անմիջական եւ անհրաժեշտ այլ պէտքերը ապահովել: Պէտք է աւելցնել, որ շրջանի եկեղեցիները, ակումբները եւ կրթական հաստատութիւնները իրենց կարգին ենթարկուած են մեծ քանդումներու: Պեյրուֆի շրջանի բնակարաններու նորոգութիւնը եւ որոշ բնակարաններու վերաշինութիւնը մաս կը կազմէ լիբանանահայութեան վերականգնումի ընդհանուր աշխատանքին: Յայտնենք, որ Պեյրուֆի շրջանին համար արտասահմանեան կարգ մը գաղութներու մէջ միութիւններ կը կազմակերպեն ներքին նուիրահաւաքներ: Մայրաքաղաքի հայութեան ստացած այս մեծ հարուածը կարիքը ունի համահայկական ամբողջական նեցուկի, որուն համար արդէն աշխատանքները ծրագրաւորումէն անցած են գործնականացման փուլ:

ՀՀԴ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍՏԵՆԱԿ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐԷՆ ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Տաւուշեան մարտերուն զուգահեռ աշխարհի տարածքին գրոհի անցան ո՛չ միայն ազերի եւ թուրք դեսպանատուներն ու քարոզչական խօսափողերը, այլեւ մանաւանդ՝ անոնց սփիւռքները: Հայկական սփիւռքին բաղդատած, ազերիական խակ ու փոքրաթիւ սփիւռքը, ուժերու առաւելագոյն համախմբումին, կազմակերպումին եւ Պաքուի իշխանութիւններուն հետ համակարգումին շնորհիւ կրցաւ անախընթաց յառաջխաղացք արձանագրել:

Անոր դիմաց սփիւռքահայութիւնը, անհատական թէ կազմակերպութիւններու քայլերով, բուռն աշխատանքի լծուեցաւ՝ դժ ղնելու այդ գրոհին, անսցաւ հակալարձակումի եւ հոն ալ մեծ յաջողութիւններ ունեցաւ:

Այնուհանդերձ, պաշտօնական երեւանէն լսուած սփիւռքի նկատմամբ շնորհակալութեան եւ գնահատանքի յայտարարութիւններուն զուգահեռ, Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան նկատեց, որ սփիւռքեան ճիգերը, որոնք անհատներու եւ կառոյցներու մեծ նուիրում եւ եռանդ ցուցաբերեցին, համադրուած են համակարգուած չէին. նաեւ չէին մէկտեղած հայկական սփիւռքի բոլոր ուժերն ու կարողութիւնները՝ կազմակերպուած հաւաքական աշխատանք տանելու համար:

Վարչապետի այս իրաւացի եւ ճիշդ հաստատումին յաջորդեցին, ինչպէս որ հարկ է գործնական քայլեր: Հայաստանեան մամուլը հաղորդեց որ յուլիսի վերջին օրերուն եւ օգոստոսի սկիզբը, վարչապետ Փաշինեան ժողովի հրաւիրած ու խիստ ոճով «կշտամբած է վարչապետի աշխատակազմի սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատար Զարեհ Սիւնատեանը՝ սփիւռքի հետ քաղաքականութեան ձախողութեան համար»: Վարչապետ Փաշինեան նաեւ աշխատանքէ արձակեց յիշեալ գրասենեակի տնօրէն պատասխանատու, բոլորն ալ՝ վարչութիւններու եւ բաժիններու պետեր:

Մէկ վայրկեան: Վարչապետի առարկայական դատողութիւնն ու բացթողումի արագ սրբագրութիւնը շնորհաւորելէ առաջ, մէկ վայրկեան լաւ դիտեց եւ ճիշդ հասկնաք պատահածը:

Առաջին հերթին, վարչապետ Փաշինեանի որոշումն էր տասնամեակներ որոշ չափով արդիւնաւէտ աշխատանք տարած սփիւռքի Նախարարութեան լուծարումը: Երկրորդ՝ վարչապետ Փաշինեանի՝ անձնակազմն է, եւ անոր՝ նշանակած յանձնակատարը: Երրորդ՝ յանձնակատար է, այսինքն՝ ուղղակի եւ անմիջականօրէն կը ստանայ վարչապետի ցուցմունքները, կը գործադրէ զանոնք, եւ հաշիւ կու տայ վարչապետին, անձամբ եւ ուղղակիօրէն:

Այսպէս եղած է աւելի քան երկու տարի, եւ կարելի է ապահով ըսել, որ աւելի քան երկու տարի է վեր, վարչապետի մարդը հանդիսացող յանձնակատարն ու վարչապետի անձնակազմին պատկանող բաժանմունքները վարչապետի անմիջական հսկողութեան տակ, վարչապետի ցուցմունքներով գործադրած են վարչապետի քաղաքականութիւնը:

Իսկ ճիշդ ի՞նչ է վարչապետ Փաշին-

եանի սփիւռքեան քաղաքականութիւնը, որուն ձախողութեան համար կը կշտամբուի յանձնակատարը, եւ պաշտօնագուրկ կ'ըլլան տասը պատասխանատուները:

Այդ քաղաքականութիւնը լաւագոյնս բանաձեւած է նոյնիսքն վարչապետ Փաշինեան, 20 ապրիլ 2020-ին իր «Ֆէյսպուք Լայվ» ելոյթով:

Փաշինեան աներկբայօրէն յայտարարեց, որ եթէ քսան տարի առաջ սփիւռքահայութեան մեծ մասը ներգրաւուած էր սփիւռքի քաղաքական, կրօնական եւ այլ ոլորտի կազմակերպութիւններու մէջ, եւ անոնք էին անոր կամուրջը Հայաստանի հետ, ապա այսօր միայն փոքր մասը ներգրաւուած է, եւ ինք ուղղակիօրէն կը հաղորդակցի սփիւռքահայոց հետ՝ իր «Ֆէյսպուք Լայվ»-ով:

Վարչապետ Փաշինեանի՝ քաղաքականութիւնն է շրջանցել սփիւռքի կառոյցներն ու կազմակերպութիւնները, «տանուլ տալով», ինչպէս հայրենի լրագրողներ ըսին, մէկտեղուած, համախումբ, կազմակերպուած աշխատանքի ամէն առաջադրանք:

Ա՛յս քաղաքականութիւնն է, որ ճշգրտօրէն կատարեցին վարչապետի յանձնակատարն ու վարչապետի աշխատակազմը՝ անոր ուղիղ ցուցմունքներուն եւ հսկողութեան տակ: Ա՛յս քաղաքականութիւնն է, որուն անհեռատես եւ վնասակար ըլլալը փաստուեցաւ տաւուշեան մարտերուն զուգահեռ:

Իմ կարծիքով, այդ խեղճ քաւութեան նոխազները պէտք է վարձատրուէին ցուցմունքները ճիշդ գործադրելուն համար:

Ամէն պարագայի. ազնիւ մարդ է պէտք սխալը բարձրաձայն ընդունելու, եւ քաջ մարդ է պէտք այդ սխալին հետեւանքներուն պատասխանատուութիւնը ստանձնելու: Միւս տեսակի մարդը քաւութեան նոխազ կը ճարէ:

Հիմնականը այն է, որ այսօր վարչապետ Փաշինեան ելած է սրբագրելու սխալը, բայց կը բաւարարուի կշտամբելով մէկը եւ վտարելով միւսները, մինչ քաղաքականութեան՝ սրբագրութիւն է պէտք: Պէտք է հասկնալ, որ մեր ազգին, հայրենիքին եւ զաղթօճախներուն դիմագրաւած մեծ մարտահրաւերները կենսական կը դարձնեն բոլոր ուժերու եւ կարելիութիւններու համախմբումը, հաստատութեանական գործելաճը, կառոյցներու եւ կազմակերպութիւններու ամրապնդումը, եւ սփիւռք-Հայաստան համակարգումը:

Անկէ զատ ամէն քայլ եւ միջոցառում աչքի փոշի ցանել է եւ մատի ետեւ թաքնուելու փորձ:

Վերադառնալով սփիւռքին ուղղուած գնահատանքներուն, անտեղի է շնորհակալութեան ամէն արտայայտութիւն. սփիւռքի տարածքին ամէն անհատ եւ կառոյց, որ գործած է, իր ճիտի, հոգիի, խղճի եւ արեան պարտքը կատարած է, եւ ոչինչ կը սպասէ անոր փոխարէն. ոչ իսկ շնորհակալական խօսք:

Ոչինչ կը սպասէ, բայց կը պահանջ՝ քաղաքականութեան սրբագրութիւն, ի մեր Հայաստանի ու հայութեան:

ՀԱՅԿԱԶՈՒՆ

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՅԵԼԵՑ...

Շարունակուած Ա. Էջնէ



Սարգիս, Ս. Աստուածածին եւ Սրբոց Վարդանանց, ինչպէս նաեւ Ազգային միացեալ վարժարան:

Վեհափառ հայրապետը մօտէն տեղեկացաւ պայթումին հետեւանքով արձանագրուած վնասներուն: Վեհափառը իր հայրական քաջալերանքը յայտնեց առաջնորդ սրբազանին, Լիբանանի հայոց թեմին մէջ ծառայողներուն եւ գաղութի զաւակներուն՝ ըսելով. «Մի՛ յուսահատիք, մենք միասնաբար, հաւաքական հաւատքով ու նուիրումով պիտի վերականգնենք Լիբանանի հայութիւնը՝ վերահաստատելով անոր համասփիւռքեան դերակատարութիւնը»: Ան այս առիթով նաեւ յիշեցուց, թէ Հայաստանը, Արցախը, սփիւռքը եւ ամբողջ հայութիւնը Լիբանանի հայութեան գործնապէս զօրակից են:

Այցելութեան աւարտին, վեհափառ հայրապետը Ազգային առաջնորդարանին մէջ թեմական պատասխանատուներուն հետ իր ունեցած հանդիպման ընթացքին դարձեալ յիշեցուց, թէ կարելի փութով պէտք է վնասներուն արժեւորումը կատարուի, որպէսզի կարենանք կազմակերպուած կերպով լծուիլ աշխատանքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ...

Շարունակուած Ա. Էջնէ

«Հայաստանի մէջ Սեւրի հաշտութեան պայմանագիրի 100-ամեակի յիշատակման առնչութեամբ Թուրքիոյ արտաքին գործոց Նախարարութեան յայտարարութիւնը անգամ մը եւս ցոյց կու տայ այդ երկրի անկարողութիւնը՝ առերեսուելու իր անցեալին հետ: Չարմանքի արժանի է, որ Թուրքիոյ ներկայ կառավարութիւնը, որ առիթ չի փախցնէր արժեւորելու օսմանեան ժառանգութիւնը՝ այդօրինակ ջղային արձագանք կը ցուցաբերէ նոյն Օսմանեան կայսրութեան կողմէ շարք մը պետութիւններու՝ այդ կարգին Հայաստանի Հանրապետութեան հետ կնքուած Սեւրի պայմանագիրի յիշատակումին նկատմամբ: Սեւրի հաշտութեան պայմանագիրը եղած է, կայ եւ պիտի շարունակէ մնալ պատմական փաստ, որ կարելի չէ վերախմբագրել կամ ջնջել: Թուրքիան, խուսափելով առերեսուիլ իր անցեալին հետ եւ ուրիշներուն կողմ ուղղելով «պատմութեան թշնամանքի փոխարէն դասեր քաղել», կը շարունակէ Հայոց ցեղասպանութիւնը արդարացնելու եւ հայ ժողովուրդին նոր ոճ-րագործութիւններով սպառնալու աւանդական քաղաքականութիւնը: Թուրքիոյ կողմէ մեր շրջանին մէջ խաղաղութեան եւ անվտանգութեան խաթարման ուղղուած քայլերը, Հայաստանի հանդէպ որդեգրած ռազմատենչ կեցուածքը դրացի շրջանները ապակայունացնելու Թուրքիոյ ներկայ կառավարութեան ծաւալապաշտական քաղաքականութեան մաս կը կազմեն: Միայն այդ քաղաքականութեան վերանախումբ է Թուրքիոյ կողմէ անցեալին հետ առերեսուելու կարողութիւնը ճամբայ կը հարթեն մեր շրջանի ժողովուրդներուն միջեւ իրական հաշտութեան համար», «Արմենփրես»-ի հաղորդումով այս մասին նշուած է Աննա Նարդալեանի մեկնաբանութեան մէջ:

«ՄԻՆԱՔԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԱՆԿԵՂԾ ԶԱՆՔ ՉԵՆ ԹԱՓԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱԳԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ»

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԸ ԶԱՌՈՒՇՈՂՈՒ

Ազրայեյանի նոր նշանակումը արտաքին գործոց նախարար ՃեյհուՆ Պայրամով պաշտոնական այցելությանը մեկնած է Թուրքիա: Այս մասին կը հաղորդէ «Ինթերֆաքս» լրատու գործակալության ազդրայեյանական ծառայությունը՝ յղում կատարելով երկրի արտաքին գործոց նախարարության:

«Այցելության ծիրին մէջ նախատեսուած են Պայրամովի հանդիպումները Թուրքիոյ բարձրաստիճան պաշտօնատարներուն հետ», կը հաղորդէ Ազրայեյանի արտաքին գործոց նախարարութիւնը:

Ասիկա Պայրամովի՝ Ազրայեյանի արտաքին գործոց նախարարի պաշտօնը ստանձնելէն ետք առաջին արտասահմանէն այցելութիւնն է:

Յիշեցնենք, որ Պայրամով Ազրայեյանի արտաքին գործոց նախարարի պաշտօնին նշանակուած է 16 յուլիսին՝ նախկին արտաքին գործոց նախարար Էլմար Մամետետերովի պաշտօնանկութենէն ետք:

Ազրայեյանական լրատուամիջոցներ հաղորդեցին, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլուժ Զաւուշօղլու Պայրամովի հետ հանդիպումէն ետք տրուած մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարած է. «Եղբայրական Ազրայեյանը միայնակ չէ, եւ Թուրքիան իր բոլոր կարելիութիւններով կը գտնուի Ազրայեյանի կողքին եւ պիտի շարունակէ մնալ անոր կողքին»:

Ան անգամ մը եւս անհիմն կերպով Յայաստանը մեղադրած է «Ազրայեյանի տարածքները բռնագրաւելու» յանցանքով:

ԱՊԱ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ խօսելով ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու աշխատանքին մասին՝ Զաւուշօղլու յայտարարած է. «Յակառակ միջազգային կառոյցներու՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման վերաբերող որոշումներուն, տագնապը լուծում չի գտներ: ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահները անկեղծ ջանք չեն թափեր տագնապին լուծման համար»:

ԱՐՅԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ...

Շարունակուած Ա. Էջէն

Նաեւ անոնց դաշնակիցներ Յայաստանի, Պելճիքայի, Յունաստանի, Հիճազի (այժմու՝ Սեւուական Արաբիան), Լեհաստանի, Փորթուգալի, Ռումանիոյ, Սերպիա-Խորուաթիա-Սլովենական պետութեան եւ Չեխոսլովակիոյ, իսկ միւս կողմէ՝ Համաշխարհային Ա. պատերազմին պարտութիւն կրած Թուրքիոյ կողմէ:

Սերիի պայմանագիրը խարսխուած էր ժողովուրդներու ինքնորոշման եւ իրաւահասարութեան գաղափարներուն վրայ՝ նպատակ ունենալով վերջ դնել բռնատիրութիւններուն եւ ազատութիւն ու անկախութիւն շնորհել շրջանի ժողովուրդներուն՝ իրենց պատմական տարածքներուն մէջ:

Պայմանագիրը կը փաստէր հայերու իրաւատիրութիւնը Հայկական Լեռնաշխարհի պատմական հայկական տարածքներուն նկատմամբ:

Յատկապէս՝ 89-րդ յօդուածով կը նախատեսուէր, որ Թուրքիան ու Յայաստանը կը համաձայնէին Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Պիլնիսի նահանգներուն մէջ երկու պետութիւններուն միջեւ սահմանազատումը ձգել Միացեալ Նահանգներու որոշումին, որուն համաձայն, Յայաստանի Հանրապետութեան տարածքը պէտք է կազմէր շուրջ 160 հազար քիլոմետր՝ դեպի Սեւ ծով ելքով:

Սերիի պայմանագիրի Յայաստանին վերաբերող դրոյթները չէն իրականացած միջազգային եւ շրջանային շարք մը քաղաքական հոլովոյթներու պատճառով: Սակայն պայմանագիրը երբեւէ ուժը կորսնցուցած չէ յայտարարուած եւ մինչեւ օրս կը մնայ արդիական»:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐՐՈՐԳ ԹՈՒՉՔՈՎ...

Շարունակուած Ա. Էջէն

օգոստոսին, երկրորդը՝ 9 օգոստոսին՝ Արցախի ժողովուրդին անունով: Օդանւերը Լիբանան տեղափոխած են մարդասիրական օգնութիւն, որ պարունակած է դեղորայք եւ բժշկական պարագաներ՝ նախատեսուած 4 օգոստոսին Պելլուրի նաւահանգիստին մէջ տեղի ունեցած պայթումէն տուժածներուն օգնութիւն ցոյց տալու համար:

Երրորդ օդանւով ուղարկուած է սնունդ, դեղորայք եւ հագուստեղէն:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ...

Շարունակուած Ա. Էջէն

Պատուիրակութիւնը հասած է Լիբանան՝ բժշկական օժանդակութիւն տրամադրելու աղետեալներուն:

Հանդիպումէն ետք, Թեոխարուս պատրաստակամութիւն յայտնեց դեղորայքի եւ կաթնեղէնի օժանդակութիւն տրամադրելու Լիբանանահայ օգնութեան խաչին:

Տեղին է յիշել, որ բժիշկ երեսփոխանը 40 անգամ այցելած է Արցախ եւ կը նախագահէ Եւրոպական խորհրդարանի եւ Հայկական բարեկամական յանձնախումբներուն:

«ՏԱԳՆԱԳԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՃԱԾ Ե ՇԱՏ ԱՌՈՒՄՆԵՐՈՎ. ԱՏԻԿԱ ԿՈՐՈՒՍՏ Ե ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» Կ'ԸՍԵ ՊՈԼԹԸ

Միացեալ Նահանգներու նախագահին ազգային անվտանգութեան հարցերով նախկին խորհրդական Ճոն Պուլթըն «Արմիտիզ»-ի հետ հարցազրոյցի ընթացքին բացատրած է, թէ իՆչ նկատի ունէր, երբ Հայաստան այցելութեան ժամանակ յայտարարած էր, որ Հայաստանի Հանրապետութեան վարչապետը հիւսնայի դիրքի վրայ է նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցով վճռական որոշում տալու համար:

«Ես ժողովրդավարական հասարակութեան մէջ ապրելու փաստը կ'արձանագրէի, երբ երկրի նոր ղեկավարը պաշտօն կը ստանձնէ: Ատիկա ժամանակահատուած է՝ տեսնելու, թէ միջազգային տագնապները, յայտկապէս անոնք, որոնք փակուղիի մէջ են, արդեօք կարելիութիւն ունի՞ն փակուղիէն դուրս գալու: Նախնական հանդիպումներու ժամանակ յուսադրող նշաններ եղան, այցելութենէն ետք մեկ տարւան ընթացքին ատիկա այդպէս ալ չաշխատեցաւ, եւ տագնապին մակարդակը իրականութեան մէջ աճած է շատ առումներով: Կը կարծեմ, որ ատիկա կորուստ է երկու երկիրներու՝ Ազրայեյանի եւ Հայաստանի ժողովուրդներուն համար», ըսաւ ան:

Պուլթըն նշեց, թէ կը հասկնայ, որ տագնապին լուծումը բարդ է:

«Ես Կովկասը կը նկատեմ առանց-



ջային ո'չ միայն այնտեղ ապրողներուն համար, այլ նաեւ Միացեալ Նահանգներու եւ ամբողջ աշխարհի համար: Ասիկա իրականութեան մէջ շատ վտանգաւոր շրջակայք է ձեր քանի մը դրացիներուն պատճառով: Պիտի փափաքէի, որ Միացեալ Նահանգները այս հարցին աւելի ուշադրութիւն դարձնէին: Պիտի փափաքէի, որ մենք աւելի օգտակար ըլլանք, սակայն այնտեղ երեք փոքր երկիրներ կան՝ շրջապատուած մէկ մեծ երկրով եւ երկու ինդոյայանց երկիրներով հարաւէն: Կը կարծեմ, որ Միացեալ Նահանգներու՝ դուրսէն ներկայութիւնը կ'աւելցնէ շրջանային անվտանգութիւնը, որովհետեւ մենք սահմանափակուած չենք աշխարհագրական առումով», ըսաւ ան:

ԵՐԵՄՓՈՒՄԸ ՅԱԿՈՔ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ...

Շարունակուած Ա. Էջէն

շրջաններէն Մար Միայելի՝ ընկերակցութեամբ ՀՅԴ «Երիտապիող» կոմիտէի ներկայացուցիչ Վազգէն Պեքերեճեանի:

Մեծ թիւով հայերու բնակութեան վայր հանդիսացող Մար Միայելի մէջ երեսփոխան Բագրատունի նախ վկայեց շրջանին մէջ արձանագրուած նիւթական հսկայական վնասներուն եւ աւերին:

Այնուհետեւ Բագրատունիի այցելեց նաեւ շրջանին մէջ բնակող հայորդիներու վնասուած բնակարանները: Ան բնակիչներուն հետ մտերմիկ զրոյցներու ընդմէջէն ծանօթացաւ պայթումին պատճառով իրենց կրած մարմնական թէ նիւթա-



կան վնասներուն, ինչպէս նաեւ ընտանիքներուն դիմագրաւած ընկերային-տնտեսական դժուարութիւններուն:

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը անմիջական թելադրանքներ կատարեց շրջանի պատասխանատու ընկերներուն, որ ցարդ կատարուած աշխատանքները բազմապատկէն եւ յաւելեալ ճիգով կատարեն վնասներու գնահատումը՝ համապատասխան քայլերու դիմելու

համար:

Էշնեֆիէի, Ժեթաուիի, Մար Միայելի, Ժըմմէյգէի եւ Զարանթինայի մէջ արձանագրուած վնասներու գնահատման գործը պիտի շարունակուի: Յաւելեալ զարկ պիտի տրուի նաեւ թիրախաւորուած օժանդակութեանը:

Բագրատունի յառաջիկայ օրերուն պիտի շարունակէ իր այցելութիւնները Պելլուրիի հայ ընտանիքներուն:

ՓՈՒԹԻՆ. «ՌՈՒՄԻԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է «ՔՈՐՈՆԱ» ԺԱՀԻՆ ԴԷՄ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԱՏԱՆԻԻԹԸ»

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին կառավարութեան անդամներուն հետ խորհրդրդակցական նիստի բացումը կատարելով յայտարարած է Ռուսիոյ մէջ «Քորոնա» ժահրին դէմ առաջին պատուաստանիւթի արձանագրման մասին: Այս մասին կը հաղորդէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը:

«Որքան գիտեմ՝ այսօր առաւօտեան աշխարհի վրայ «Քորոնա» ժահրին դէմ առաջին պատուաստանիւթը արձանագրուած է», յայտարարած է Ռուսիոյ նախագահը եւ առողջապահութեան նախարար Սիլխայիլ Մուրաշքոյէն խնդրած ատոր վերաբերեալ մանրամասնութիւններ յայտնել:

«Ես գիտեմ, որ անիկա բաւական արդիւնաւետ կ'աշխատի, կայուն դիմադրողականութիւն կը ձեւաւորէ, եւ կը կրկնեմ, անցած է բոլոր ստուգումները», աւելցուցած է ան:

Փութին նաեւ յայտարարած է, որ Ռուսիոյ մէջ արձանագրուած պատուաստանիւթի զանգուածային արտադրութիւնը պէտք է սկսի մօտ օրէն, միեւնոյն ժամանակ պատուաստումները պիտի ըլլան կամաւոր սկզբունքով:

Ռուսիոյ առողջապահութեան նախարարը նշած է, թէ պատուաստանիւթեր մշակուած են Զինաստանի եւ շարք մը այլ երկիրներու մէջ, սակայն անոնք այժմ կը գտնուին տարրալուծարանային հետազօտութիւններու փուլի մէջ: «Փաստօրէն, արձանագրման վկայագիր առաջին անգամ Ռուսիոյ մէջ է, որ կը տրուի», նշած է ան:

ՆԵԹԱՆԻԱՀՈՒ «ԹՐԱՄՓ ՆԵՐԿԱՅԻՍ ԶԲԱՂԱԾ Է, ԵՒ ԱՅՍՐՅՈՐԳԱՆԱՆԻ՝ ԻՍՐԱՅԷԼԻ ԿՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՉԷ»

Իսրայելի վարչապետ Պեհաբին Նեթանիահու Միացեալ Նահանգները պատասխանատու նկատեց Այսրոյողանանի բնակեցման վայրերը Իսրայելին կցելու ծրագիրը չգործադրելուն՝ նշելով. «Սկիզբէն յստակ էր, որ գերիշխանութեան տարածումը պիտի գործադրուի միայն Միացեալ Նահանգներու հետ համաձայնութեամբ, եւ թէ՛ այդ ջլլար, զայն շատոնց կատարած կ'ըլլալինք»:

«Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի ներկայիս այլ հարցերով զբաղած է, եւ այս հարցը՝ գերիշխանութեան ծրագիրը, իր գլխաւոր առաջնահերթութիւններէն մէկը չէ», նշեց Նեթանիահու՝ յոյս յայտնելով, որ «մօտիկ ապագային կրնանք գերիշխանութեան տարածումը, ինչպէս նաեւ Իսրայելի համար կարեւոր դիւանագիտական այլ հարցեր գործադրել»:

Ակնարկելով «Դարու գործարք»-ին՝ Նեթանիահու յայտնեց. «Թրամփի խումբին հետ երեք տարի աշխատեցայ այս ծրագրին վրայ, եւ իմ կարծիքովս՝ ատիկա միակն է, որ Իսրայելի հիմնական շահերը կը պահպանէ»:



ԱՖԻԼ AFHIL
ARMENIAN MUTUAL FUND
20 Years of Commitment

The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others

Mahatma Gandhi

Health Insurance Travel Insurance GoodCare Clinic Car Insurance Health Clubs

Home Medical Equipment BOB - Western Union University and Student Fund «95/95» Health Magazine

www.afhil.com AFHIL Mutual Fund
Bourj Hammoud, Arin Center, 4th Floor Tel. 01 242 556/7